ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

<< 02 >> հոկտեմբերի 2018թ. N 488-Ա

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 7-րդ և 20-րդ ենթակետերով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության կանոնադրությունը համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Ա.ՋԱՆՋՈՒՂԱԶՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
«02» հոկտեմբերի 2018թ.
N 488-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) միջազգային համագործակցության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որը կազմավորվել է Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 743-Լ որոշման համաձայն:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնելիս ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, օրենքների, այլ իրավական ակտերի և իր կանոնադրության հիման վրա:

3. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարը (այսուհետ՝ Նախարար) հաստատում է Վարչության կանոնադրությունը, այդ թվում՝ կառուցվածքը, և կանոնադրության մեջ կատարում փոփոխություններ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

4. Վարչության հիմնական խնդիրը օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ ֆինանսական և տեխնիկական համագործակցության ոլորտներում Նախարարությանը վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումն է:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Վարչության գործառույթներն են՝

1) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ ֆինանսական և տեխնիկական համագործակցության ապահովումը.

2) օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից վարկերի և դրամաշնորհների ստացման համար նախապատրաստական աշխատանքների համակարգումը, այդ թվում՝ այլ պետական մարմինների ծրագրային առաջարկների ուսումնասիրումը, ամփոփումը և ներկայացումը.

3) օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից վարկերի և դրամաշնորհների ստացման համար անհրաժեշտ համաձայնագրերի նախապատրաստումը, բանակցությունների վարումը, ստորագրման համար անհրաժեշտ ընթացակարգերի ապահովումը, վավերացման և հաստատման ընթացակարգերի համար անհրաժեշտ ֆինանսական պարտավորությունների մասին եզրակացությունների տրամադրումը, «Միջազգային պայմանագրերի մասին» օրենքով անհրաժեշտ փաստաթղթերի հավաքագրումը և սահմանված ընթացակարգերի ապահովումը.

4) միջազգային կազմակերպությունների կողմից բյուջետային աջակցության տրամադրման նպատակով բանակցությունների վարումը և համապատասխան նախապայմանների կատարման ընթացքի մոնիթորինգի իրականացումը.

5) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համաձայնագրերի, հուշագրերի, արձանագրությունների կնքման նախաձեռնումը և կազմակերպումը, ամրագրված միջոցառումների կատարման ընթացքի մոնիթորինգը, այլ գերատեսչություններից ստացված համաձայնագրերի նախագծերի վերաբերյալ կարծիքի տրամադրումը.

6) անհրաժեշտության դեպքում օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ Հայաստանի Հանրապետության համագործակցության վերաբերյալ Նախարարության իրավասության շրջանակներում ամփոփ տեղեկանքների պատրաստումը.

7) Նախարարի համանախագահությամբ միջկառավարական հանձնաժողովների նիստերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ բանակցությունների և հանդիպումների կազմակերպումը.

8) Հայաստանի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելու արդյունքում Նախարարության գործառույթներին առնչվող ոլորտներում,

մասնավորապես, մաքսային և հարկային մեթոդաբանության, բյուջետային, գանձապետական, իրավական և տեղեկատվության փոխանակման բնագավառներում համագործակցության հարցերի, հնարավոր խնդիրների և դժվարությունների հաշվառումը, դիրքորոշումների և կարծիքների հավաքագրումը, ամփոփումը, համակարգումը և ներկայացումը Եվրասիական տնտեսական միությանը.

9) Եվրասիական տնտեսական միության հետ համաձայնագրերի, ծրագրային առաջարկների, արձանագրությունների և այլ փաստաթղթերի՝ Նախարարության իրավասության մասով Նախարարության այլ ստորաբաժանումներին համապատասխան հարցումների ներկայացումը, ստացված դիրքորոշումների ամփոփումը, վերլուծումը և Նախարարության դիրքորոշման տրամադրումը.

10) Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի խորհրդի և կոլեգիայի նիստերի ընթացքում Նախարարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում քննարկման ենթակա հարցերի վերաբերյալ այլ ստորաբաժանումներին համապատասխան հարցումների ներկայացումը, ստացված դիրքորոշումների ամփոփումը, վերլուծումը և Նախարարության դիրքորոշման տրամադրումը.

11) Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի կողմից կազմակերպվող միջոցառումներին, հանդիպումներին, բանակցություններին, ինչպես նաև հանձնաժողովի խորհրդի և կոլեգիայի նիստերին Նախարարության համապատասխան պաշտոնյաների մասնակցության նպատակով տեսակոնֆերանսների կազմակերպումը, մասնակցությունը և նախապատրաստական աշխատանքների իրականացումը.

12) օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպվող միջոցառումներին, հանդիպումներին, բանակցություններին և միջկառավարական հանձնաժողովների նիստերին Նախարարի և Նախարարության համապատասխան պաշտոնյաների մասնակցությանը, այդ թվում՝ նաև արտերկրյա այցերի կազմակերպման հետ կապված աշխատանքների ապահովումը.

13) արարողակարգային խնդիրների և վարկային ու դրամաշնորհային համաձայնագրերի թարգմանությունների ապահովումը.

14) Նախարարության կանոնադրությամբ հաստատված գործառույթների իրականացումը.

15) Նախարարի և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) այլ հանձնարարականների կատարումը:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Վարչությունը ղեկավարում է Վարչության պետը, նրա բացակայության դեպքում՝ բաժինների պետերից մեկը՝ Վարչության պետի հանձնարարությամբ:

7. Վարչության պետը անմիջական հաշվետու է Նախարարին:

8. Վարչության գործունեության համակարգումը Նախարարի հրամանով կարող է վերապահվել Նախարարի տեղակալներից մեկին:

9. Վարչության պետին հանձնարարականներ և ցուցումներ տալիս է Նախարարը: Նախարարի հանձնարարությամբ հանձնարարականները կարող են փոխանցել իրենց համակարգման լիազորությունների շրջանակներում Նախարարի տեղակալը, Գլխավոր քարտուղարը:

10. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերն ստորագրում է Վարչության պետը:

11. Վարչության բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժինների պետերը:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

12. Վարչության կառուցվածքում ընդգրկվում են հետևյալ բաժինները՝

1) Օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության համակարգման բաժին.

2) Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների հետ համագործակցության բաժին:

13. Վարչության յուրաքանչյուր քաղաքացիական ծառայողի գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրվում և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքները ու կոմպետենցիաները և կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով (աշխատատեղի նկարագրով):